

ՄԵՐ ԳԱՐԱԽՈՐ ՍՈՒԳԸ

(Հայրիկի եւ Պոօեանցի յիսասակից)

Այնտեղ, սգաւոր անհաս բարձունքից  
Գուժկան, մահանիշ զանգն է զօղանջում  
Ու հէզ սրբերիս կեանքի խորշերից  
Վիշտ ու տառապանք ողբի են կանչում:

Ու սև ցաւերին որդեգիր դարձած,  
Այս անձուկ հովտում դարբերով փակուած՝  
Մենք ողբ ենք հնչում՝ կոչին հնազանդ,  
Գարերից ողբը մնաց մեզ աւանդ . . .

Ու լալա—հնչին մեր ողբի ձայնին  
Տալիս են ձորերն արձագանք ուժգին,  
Բայց հսկայ ժայռեր՝ լուռ, արձանացած,  
Նայում են անշարժ վերից դէպի ցած:

Եւ այդպէս ահա դարաւոր վկան  
Մեր տառապանքի, նահատակութեան՝  
Լուռ է, անզգայ . . . մինչև երբ, արդեօք,  
Մեզ պիտի տանջես, այ բնիս անողոք . . .

ՅԱՐՈՒՔԻՆ ՊԵՏՐՈՍԵԱՆԵ.



ՄԵՐ ՄԵԾ ՀԱՅՐԻԿԻՆ

Լացող վաթանի կարօար սրաիդ,  
Անտէրունչ թողած կարմիր հայրենիք,  
Եւ դեռ չտեսած շողքն ազատութեան,  
Ինչո՞ւ ես թըռչում, մեր ազիզ Հայրիկ:

Էլի տնքում են հայրենի լեռներ,  
Էլի դեղջուկը արին է լալիս,